

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԿԱՊԵՐԸ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գրադարանները իրականացնում են միջազգային գրքափոխանակությունը, կատարում են արտասահմանյան հրատարակությունների գնումներ, կազմակերպում գրականության նվիրատվություն և ընդունում արտասահմանյան հյուրերի:

1968 թ. գիտությունների ակադեմիայի 26 գրադարաններից 9-ը գրքափոխանակություն են կատարել արտասահմանյան 47 երկրների 892 գրադարանների, գիտա-հետազոտական հիմնարկների, ուսումնական հաստատությունների, խմբագրությունների, հայագիտական և հայկական մշակութային օջախների ու առանձին հայազետների և հայ մտավորականների հետ: Միջազգային գրքափոխանակություն են կատարում ֆունդամենտալ գրադարանը և Բյուրականի աստղադիտարանի, գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի, մաթեմատիկայի և մեխանիկայի, երկրաբանական գիտությունների, ֆիզիոլոգիայի և բիոքիմիայի ինստիտուտների, արևելագիտական սեկտորի, Սևանի հիդրոբիոլոգիական կայանի ու բիոլոգիական գիտությունների գրադարանները: Միջազգային գրքափոխանակությունը մեծ մասամբ կատարում է ֆունդամենտալ գրադարանը, որը կապեր ունի արտասահմանյան 453 գիտական հիմնարկների և գրադարանների հետ և միմիայն 1969 թ. այդ միջոցով ստացել է 2768 գիրք և հանդես: Միջազգային գրքափոխանակություն կատարող ակադեմիական գրադարանները 1969 թ. Հայաստանի ակադեմիայի գիտական հրատարակություններից ուղարկել են 12183 գիրք և հանդես և ստացել են 10552-ը:

Միջազգային գրքափոխանակություն կատարվում է ինչպես սոցիալիստական երկրների, նույնպես և զարգացող ու կապիտալիստական երկրների հետ. 1969 թ. սոցիալիստական երկրների գրքափոխանակություն կատարող հիմնարկներին ուղարկվել է 3874 գիրք և հանդես, իսկ նրանցից ստացվել է 3469 գրադ. միավոր: Զարգացող երկրներում՝ 40 գրքափոխանակություն կատարող հիմնարկների ուղարկվել է 9183 գիրք և հանդես, ստացվել 7860-ը, իսկ կապիտալիստական երկրներում՝ 243 գրքափոխանա-

կության հիմնարկների ուղարկվել է 4881 գիրք և հանդես, ստացվել 4281-ը:

Միջազգային գրքափոխանակություն կատարվում է արտասահմանյան հետևյալ գիտական հիմնարկների հետ.

1. Սոցիալիստական երկրներից՝ Բուլղարիայի, ԳԴՀ-ի, Հունգարիայի, Զեխոսլովակիայի, ԿԺԴՀ-ի, Լեհաստանի, Ռումինիայի և Հարավսլավիայի գիտությունների ակադեմիաների գրադարանների, Վարշավայի պետհամալսարանի, Կուրայի գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի, Սոֆիայի գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի, Դրեզդենի գիտությունների ակադեմիայի ֆիլիալի, Հանոյի պետական, Զինաստանի ազգային, Ուլան-Բատորի պետական, Ալբանիայի պետական համալսարանների և Բրատիսլավայի գիտությունների ակադեմիայի ու այլ բազմաթիվ քաղաքների գիտական գրադարանների հետ:

2. Զարգացող երկրներից՝ Ամրիտսարի, Սան-Պաուլոյի, Դակարի, Մոնտեվիդեոյի համալսարանների գրադարանները, Կահիրեի արևելագիտական, Թեհրանի Իրան—ՍՍՀՄ կուլտուրական կապերի ընկերության, Բեյրութի Սեն-ժոզեֆի համալսարանի ու այլ բազմաթիվ գրադարանների հետ:

3. Կապիտալիստական երկրներից՝ Հելսինկիի, Ստոկհոլմի, Ամստերդամի, Վիեննայի և Դուբլինի գիտությունների ակադեմիաների, Հռոմի Լինչի ազգային ակադեմիայի, Մայնցի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի, Փարիզի գիտությունների ակադեմիայի լեզվի ու գրականության ինստիտուտի, Վաշինգտոնի կոնգրեսի, Նյու-Յորքի հանրային, Կամբերայի ազգային, Լոնդոնի կենտրոնական ազգային և Բրիտանական թանգարանի, Վիեննայի ազգային, Փարիզի ազգային, Լոս-Անջելեսի, Կալիֆոռնիայի, Նեդլանդի, Օքսֆորդի, Վիկտորիայի, Հելսինկիի, Բազելի և Սորբոնի համալսարանների, Քեմբրիջի, Հարվարդի քոլեջի, Բոննի գիտական ընկերության ու աշխարհի այլ բազմաթիվ գրադարանների հետ:

Ֆունդամենտալ գրադարանը ակտիվ զբոսափոխանակություն է կատարում հատկապես արտասահմանյան հայագիտական և հայ

մշակութային օջախների հետ, նպատակ ունենալով արտասահմանից ստանալ հայագիտական և հայատառ հրատարակություններ: Արտասահմանյան գրքափոխանակության նման հիմնարկություններից և կազմակերպություններից են՝ Նյու-Յորքի «Նոր Սերաստիա» հայրենակցական միությունը, «The Armenian Guardian» ամսագրի խմբագրությունը և հայկան քարեգործական ընդհանուր միությունը, Քեմբրիջի, Հարվարդի քոլեջը, համալսարանին կից հայագիտական հետազոտությունների կենտրոնը և հայագիտական ուսումնասիրությունների ազգային միությունը, Ֆիլադելֆիայի «Նոր Մալաթիա», «Արաբկիր» ամսագրերի խմբագրությունները և «Արաբկիր» հայրենակցական միությունը, Վենետիկի Մխիթարյանների միաբանությունը, Փարիզի «Revue des Etudes Armeniennes», «Շինարար» ամսագրի և «Բյուրական» շաբաթաթերթի խմբագրությունները ու Սորբոնի համալսարանը, Կահիրեի «Սավառնակ» պարբերաթերթի և «Ջահակիր» շաբաթաթերթի խմբագրությունները, Բուենոս-Այրեսի «Սեան» և «Շարժում» թերթերի ու «Նոր Հաճըն» ամսագրի խմբագրությունները, Բելրուսի «Ջահակիր» ամսագրի խմբագրությունը, Հայկազյան քոլեջը, Հովակիմյան—Մանուկյանի «Օրվանդ Հյուսիսյան ամբիոն» և ամերիկյան համալսարանի գրադարանը, Սիդնեյ քաղաքի (Ավրա-տրալիա) «Լոյս» պարբերականի խմբագրությունը, Երուսաղեմի Կյուլպենկյան գրադարանը, Անթիլիասի կաթողիկոսությունը, Վիեննայի Մխիթարյանների միաբանությունը, Կալիֆոռնիայի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների սեկտորը՝ Բերկլիյում, Ֆրեդ-նոյի «Ասպարեկ» թերթի խմբագրությունը, Պրագայի Արևելագիտության ինստիտուտը, Բուդապեշտի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հայագիտական ամբիոնը, Բուխարեստի Պատմա-բանասիրական գիտությունների ընկերության արևելագիտության հետազոտությունների սեկտորը:

Միաժամանակ ֆունդամենտալ գրադարանը գրքափոխանակություն է կատարում կամ ակադեմիայի հրատարակություններից նվերներ է ուղարկում հետևյալ հայագետներին և հայ մտավորականներին. Խալաթի հայագետ Ջանկարլո Բոլոնզիին (Միլան) և Վալտեր Բելլարդին (Հռոմ), Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆելդին (Փարիզ), հայագետ Սեդրակ Կարյանին և ճարտարապետ էդուարդ Ութունյանին (Փարիզ), թեհրանահայ գրող Արա Հովհաննիսյանին, հասարակական գործիչ Ավետիս Խանջյանին և ճարտարապետ Հակոբ

Քիտապճյանին (Պենսիլվանիա, ԱՄՆ), Վիեննայի թեմի առաջնորդ Մեսրոպ Գրիգորյանին, լեհ հայագետներ Եվգենի Ալուշկիևիչին (Տորոն) և Բոգդան Գեմբարսկուն (Վարշավա), հունգարացի հայագետներ Սալմաշի Պալին և էդմունդ Շյուցին (Բուդապեշտ), լեզվաբան Միհրդատ Թիրեաքյանին (Նյու-Յորք), բժիշկ Ռոբեր Ծեպեճյանին (Հալեպ) և այլն:

Բյուրականի աստղագիտարանի գրադարանը գրքափոխանակություն է կատարում արտասահմանյան 285 աստղագիտական հիմնարկների գրադարանների հետ, այդ թվում. Զևսոսովակիայի Սոցիալիստական Հանրապետության 14, ԳԴՀ-ի 12, Անգլիայի 13, ԳՖՀ-ի 14, ԱՄՆ-ի 54, Ֆրանսիայի 20, Իտալիայի 13 և այլն: 1969 թ. ընթացքում Բյուրականը արտասահման է ուղարկել 648 գիրք և հանդես, իսկ նրանցից ստացել է 1150-ը: Յուրաքանչյուր տարի առաջանում են արտասահմանյան գրքափոխանակության նոր կետեր: 1969 թ. դրանցից են. Վարշավայի պոլիտեխնիկական ինստիտուտի, Բուխարեստի երկրաբանական ընկերության, Լյուբլին քաղաքի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի, Հարլեմ քաղաքի (Հոլանդիա) տեխնիկական, Այովա քաղաքի (ԱՄՆ) համալսարանի, Կալիֆոռնիայի մատենագիտական ընկերության, Օվիեդո քաղաքի (Իսպանիա) երկրաբանական ինստիտուտի, Թեհրանի Փեհլևու կայսերական և Օսակա քաղաքի (Ճապոնիա) համալսարանի մաթեմատիկական ֆակուլտետի գրադարանները: Բացի այդ նոր կապեր են հաստատվել ԱՄՆ-ի Օհայո քաղաքի փիլիսոփայության դասախոս Հակոբ Ներսոյանի և Մասաչուսեթսի համալսարանի դասախոս Վահրամ Վահրամյանի հետ:

Արտասահմանի հետ գրքափոխանակության ընդլայնումը բացատրվում է նրանով, որ Հայաստանում արագ թափով ծաղկում ու զարգանում է գիտական միտքը: Այդ պատճառով աշխարհի գիտնականների մեջ առաջացել է մեծ հետաքրքրություն դեպի Հայաստանի գիտնականների նոր հայտնագործությունները, և ցանկություն՝ ստանալ նաև մեր ակադեմիայի գիտական հրատարակությունները՝ գրքափոխանակության միջոցով: Այդ նպատակի համար սկսած 1950 թ. ամեն տարի արտասահմանյան գիտական հիմնարկներից ու գրադարաններից ստացվում են շուրջ 200—250 նամակներ: Ահա երկու օրինակ դրանցից. Վաշինգտոնի կոնգրեսի գրադարանը խնդրում է ուղարկել «Фауна Армянской ССР», «Математические вопросы кибернетики и вычислительной техники» և այլ գրքեր, իսկ Կալիֆոռնիայի ամերիկյան մատենագիտական կենտրոնի հրա-

տարակույթյունը իր նամակով ցանկություն է հայտնում ստանալու «Պատմա-բանասիրական հանդեսը», որպեսզի իր ռեֆորմատիվ բյուլետենում արտացոլեն այդ հանդեսի հոգվածները:

Գրադարանների միջազգային կապերի և փոխադարձ օգնության հարցում խոշոր դեր է խաղում նաև միջազգային միջգրադարանային արոնեմենտը, որի միջոցով մեր գիտնականները օգտագործում են արտասահմանյան այն հազվագյուտ կամ հնատիպ հրատարակությունները, որոնք մեր հանրապետության գրադարաններում չկան: Այդ ճանապարհով ակադեմիայի ֆունդամենտալ գրադարանը ժամանակավոր օգտագործման նպատակով գրքեր է ըստանում Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետության գիտությունների ակադեմիաների գրադարաններից, Բուդապեշտի ակադեմիայի պատմության ինստիտուտի, Բեռլինի, Փիսենյանի, Կրակովի, Պրագայի, Բրատիսլավայի, Սոֆիայի և Ֆլորենցիայի համալսարանների, Լոնդոնի ազգային, Փարիզի արխիվային գրականության, Պրագայի տեխնիկական գրականության և Սոֆիայի գյուղատնտեսական գրականության ակադեմիայի գրադարաններից:

Ֆունդամենտալ գրադարանը գրքափոխանակության և միջգրադարանային արոնեմենտի միջոցով կապեր է պահպանում արտասահմանյան հատկապես այն գրադարանների հետ, որոնցում բազմաթիվ տարիներ լինին պարապել և գրել է իր աշխատությունները: Դրանցից են Լոնդոնի Բրիտանական թանգարանի, Բեռլինի հանրային և Փարիզի ազգային գրադարանները: ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի գրադարանի միջազգային գրքափոխանակությունը հրանարավորություն է տալիս ակադեմիայի հրատարակություններն ուղարկել աշխարհի 46 երկրների գիտական հիմնարկներին: Գրադարանների միջգրադարանային արոնեմենտային կապերը աշխարհի բոլոր գիտնականներին հրանարավորություն են տալիս օգտագործել աշխարհի գրքային հարստությունը:

Միջազգային կապերի միջոցներից է նաև գրականության նվիրատվությունը, որը ակադեմիայի գրադարանների ֆոնդերի հարըստացման կարևոր աղբյուր է: Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և հայերեն լեզուներով գիտական արժեքավոր գրքեր են ստացվել արտասահմանի հետևյալ հայ մտավորականներից. Երվանդ Հյուսիսյան (Միլան), Սամվել Ռշտունի (Լոս-Անջելոս), Սուրեն Սարգսյան (Չիկագո), Հովհաննես Հեքիլբեյան (Նյու-Յորք), Վահե Վահան (Բեյրութ), Հր-

րանտ Արմեն (Կալիֆորնիա), Տիգրան Վարժապետյան (Բեյրութ), Ավետիս Յափոնճյան (Կահիրե), Եղիշե Զրաքյան (Նյու-Յորք), Ժուլեֆ Սվաճյան (Փարիզ), Ավետիս Սվաճյան (Լոս-Անջելոս), Պետրոս Պոստանճյան (Սոֆիա): Նվիրատվությամբ ստացված գրականությունից հատկապես պետք է նշել հայկական բարեկրթական ընդհանուր միության նվարդայի շրջանի նախագահ Երվանդ Հյուսիսյանի ուղարկած Ա. Դանթեի «Աստվածային կատակերգություն» իտալերեն հոբելյանական (1965 թ.) շքեղ եռահատոր „Istituto poligrafico dello stato“ հրատարակությունը, որը օգտագործվեց Ա. Դանթեի այդ երկի հայերեն վերջին թարգմանության ժամանակ:

Բացի այդ Երվանդ Հյուսիսյանը ուղարկել է Ա. Դանթեին վերաբերող հավաքածու, իտալերեն՝ բաղկացած 16 գրքից: Լոս-Անջելոսից Սամվել Ռշտունին 1968—1969 թթ. ուղարկել է մի շարք գիտական և գիտամասնագիտական հրատարակություններ անգլերեն լեզվով: Չիկագոյից Սուրեն Սարգսյանը 1968—1970 թթ. ուղարկել է անգլերեն բառարաններ, հանրագիտարաններ, տեղեկատու և այլ հրատարակություններ ու գիտական ուսումնասիրություններ: Ընդհանրապես նա մեծ օգնություն է ցույց տալիս նաև գիտական մյուս հիմնարկներին. Շեքսպիրագիտական գրադարանին ուղարկել է 175 գիրք, «Հայկական հանրագիտարանին»՝ 47 մեծածավալ արժեքավոր գրքեր: Գրքեր է ուղարկում նաև առանձին մտավորականների: Վերջին ժամանակներս գրքեր ստացվեցին Խաչիկ Ավագյանից (Փարիզ), Գևորգ Մերտինյանից (Տուլոն), Տիգրան Գևորգյանից (Կահիրե), Երվանդ Ճեզմեճյանից (Կահիրե), Հովհաննես Հեքիլբեյանից (որն ուղարկել է Ամերիկյան հանրագիտարանը՝ բաղկացած 30 հատորից): Մեծ թվով արժեքավոր գիտական գրքեր են ստացվել նաև արտասահմանյան հիմնարկներից և ընկերություններից: 1965 թվականից Լիսաբոնի Գալուստ Կյուլպենկյանի հիմնարկությունից սիստեմատիկաբար որպես նվեր ստացվում են անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և հայերեն հին ու նոր հրատարակված գրքեր: Մինչև հիմա այդ հիմնարկությունից ստացվել է գիտության տարբեր բնագավառներին վերաբերող 1966 գիրք, ինչպես նաև Անգլիական հանրագիտարանը: Այս տարի Կյուլպենկյանի հիմնարկությունից ստացվեցին 52 օրինակ արժեքավոր գրքեր, որոնց թվում են անգլերեն «Սոցիալական գիտությունների հանրագիտարանը» բաղկացած 17 հատորից, և «Ամերիկյան նկարչությունը, սկզբնական շրջանից մինչև մեր օրերը»՝ երկու հատորով և այլն:

Մեծ քանակությամբ զորքեր են ստացվել նաև Բելյուսթի Տոնիկյան հրատարակչությունից, Նյու-Յորքի համասերաստահայ վերաշինաց միությունից և հայկական բարեգործական ընդհանուր միությունից, Քեմբրիջի (ԱՄՆ) հայագիտական ուսումնասիրությունների ազգային ասոցիացիայից:

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության որոշման համաձայն մեր ակադեմիային նվիրաբերված անձնական գրադարանները ֆունդամենտալ գրադարանում պահվում են նվիրատուի անունով, որպես առանձին ֆոնդ:

Ֆրեզնոյից Լուիզ Նալբանդյանը 1965—1968 թթ. ուղարկել է 58 օրինակ հրատարակություններ բյուզանդագիտության և պատմության վերաբերյալ: Կահիրեից 1966 թ. ստացվեց Արշակ Ալալոյաճյանի անձնական գրադարանը, թվով 8029 օրինակ հայերեն և եվրոպական լեզուներով հայագիտական գրքեր և պարբերականներ: Հեղինակը իր մահից առաջ այդ գրադարանը կտակել էր ՀՍՍՀ ԳԱ ֆունդամենտալ գրադարանին: Նյու-Յորքից Մանուկ Բերդյանը 1967 թ. ուղարկել է 343 օրինակ 1912—1965 թթ. հրատարակություններ արվեստի ու գրականագիտության վերաբերյալ: Սոֆիայից Պետրոս Պոստանճյանը 1967 թ. ուղարկել է հայագիտությանը վերաբերող 2172 հայերեն գրքեր և պարբերականներ: Լոս-Անժելեսից Արսեն Երիցյանը 1968 թ. ուղարկել է անտիկ գրականությանը վերաբերող 5147 գիրք՝ օտար լեզուներով: Բելյուսթից Արամ Ալթունյանը 1969 թ. ուղարկել է օտար լեզուներով 206 բժշկական գրքեր:

Նվիրատվությամբ միմիայն 1969 թ. արտասահմանից ստացվել է ընդամենը 5426 գիրք և հանդես:

Բացի վերոհիշյալ աղբյուրներից ակադեմիայի գրադարանները, սկսած 1945 թ., արտասահմանյան գրքեր, հանդեսներ և թերթեր են ձեռք բերում նաև զնումների միջոցով: 1969 թ. այդ ճանապարհով ստացվել է 8405 գրադարանային միավոր արտասահմանյան հետևյալ հրատարակություններից. «Ակադեմիկ պրես» (Լոնդոն), «Պերդամոն պրես» (Նյու-Յորք և Լոնդոն), «Գոթվիլար» (Փարիզ), «Էլզեի» (Ամստերդամ), «Սպրինգեր Ֆելաքս» (Բեռլին), «Մոթոն» (Փարիզ):

Միջգրադարանային կապերի ամրապնդման միջոցներից մեկն էլ հանդիսանում է արտասահմանյան հյուրերի ընդունումը, որի շնորհիվ նրանք ծանոթանում են ֆունդամենտալ գրադարանի գրքային հարստությանն ու ակադեմիայի հրատարակություններին և պայմանավորվում գրքափոխանակության մասին: Վերջին տարիներս ֆունդամենտալ գրադարան հաճախել են արտասահմանյան շատ գիտնականներ Բուլղարիայի Ժողովրդական Հանրապետության գիտությունների ակադեմիայից, Կանադայի գիտական գրադարանների մի շարք գեկավարներ, ԳՖՀ գիտնականներ (այդ թվում՝ նաև հայագետներ), Բելգիայի ժուռնալիստներ, արտասահմանի հայկական դպրոցների ուսուցիչներ, մի շարք հայտնի հայագետներ (հունգարացի էդմունդ Շյուցը, ֆրանսիացի Ֆրեդերիկ Ֆելդին, իտալացի Զանկարլո Բուլոնդին, Կալիֆորնիայի համալսարանի պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը, Լոս-Անժելեսի համալսարանի պրոֆ. Ավետիս Սանճյանը, Քեմբրիջի հայագիտական ամերիկյան կենտրոնի ղեկավար Մանուկ Ենզը և այլն):

Գ. ՄԻՐՏՉՅԱՆ

ՍԱՆԱՀՆԻ ԳՐԱՏԱՆ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՎԱՔԱՄՈՒՆ

Հայոց թվականության ՆԻԱ (972) տարում «Սիմեոն» գրիչը Սանահնի վանքի նորակերտ կամարների տակ ընդօրինակում է մեսրոպատա առաջին մատյանը՝ Բարսեղ Կեսարացու «Կանոնգիրքը»¹: Այդ մատյանի ընդօրինակությամբ էլ սկսվում է վանքի, որպես գրչության կենտրոնի գործունեությունը, որը ընդհատումներով ձգվում է մինչև XVIII դարի վերջերը: Որ-

պես վարդապետանոց և գրչության արվեստի կենտրոն, Սանահնի վանքը ունեցել է նաև իր գրատունը, ձեռագիր մատյանների իր հարուստ հավաքածուն, որը, ինչպես մեր բոլոր հավաքածուները, ղերծ չի եղել ո՛չ թշնամական հորդանների ափսոսանքից ու ավերածությունից, և ո՛չ էլ յուրայինների անհոգությունից: Թե ինչ ձեռագրեր է բովանդակել հավաքածուն և քանակական ինչ փոփոխություններ է կրել իր ավելի քան իննհարյուրամյա գոյության ընթացքում, դժվար է ասել, քանի որ չեն եղել կամ չեն պահպանվել

¹ Ս. Զալալյան, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Տփղիս, 1842, էջ 42: